

գժրախտաբար անաւարտ մնացած է , բոլորովին սխալ , շփոթ եւ կասկածելի կը գտնէ հ. Սահեփաննոսի գրածները (1) :

Գալով Դիւ Կանժի եւ Դիւլորիէի , ինչպէս տեսնեք , ասոնք Լեւոնի տապանագրին եւ կտակին վրայ հիմնուելով՝ « հինգերորդ լատին արքայ Հայոց » կընդունին . հին սովորութեան համեմատ սակայն՝ ո՛չ տապանագրին եւ ո՛չ կտակին մէջ *usnrակէտ*ով բաժնուած են բառերը , այլ երկու տեղ ալ պարզապէս գրուած՝ « Léon de Lusignan quint roy latin du royaume d'Arménie ,, , այսինքն՝ « Լեւոն Լուսինեան Ե լատին արքայ Հայոց թագաւորութեան » : Իմաստի ճշտութեան համար եթէ հարկ է ստորակէտ դնել , պէտք է « հինգերորդ » բառէն վերջը դնել եւ կարգալ՝ « Լեւոն Լուսինեան Ե , լատին արքայ Հայոց » (2) :

Ուրեմն կը սխալին նաեւ Յուշիկի , Կանգլուա , Լընուար , Բօնիէ , եւ ուրիշ շատ շատեր որոնք ստորակէտով մը կը գտան « Լուսինեան » ազգանունը « հինգերորդ » թուական ածականէն : Ս. Պալասանեանի Պսև. Հայոց գրքին մէջ ալ (եր. 541) սխալ է այս տապանագիրը , ինչպէս սխալ են նաեւ ուրիշ կարեւոր կէտեր :

Պէտք է խոստովանիլ , թէ Կ. Եղեանց Դարդեղի Ժամանակագրութեան Յառաջաբանին մէջ (եր. 54) դնելով Լեւոնի տապանագիրը , հանձարեղ կէտադրութիւն մը ըրած է իր կողմէ , թէեւ առանց քննելու տապանաբարն ու կտակը . վասն զի արձանագրութեան մէջ սխալներ սպրդած են , ինչպէս պիտի տեսնենք իր կարգին :

Հիմա հարցում մը պիտի ընեն ինձ ընթերցողներս , հարցում մը , որ շատ բնական ալ է . այն է՝ թէ քանի որ լատինացեալ Ֆիլիպ անունով

(1) Saint-Martin , *Recherches sur la vie et les aventures de Léon* . « Mémoires de l'Académie des Inscriptions et Belles-lettres. » ին մեջ . Պարիս , 1836 , նս . ԺԲ , եր . 147-158 :

(2) Թե՛ սապանագրին եւ թե՛ կտակին մեջի *usnrակէտ*ը նշելու համար ես անձամբ այցելեցի նախ Ֆրանսական Ազգային Դիւանարանը (Archives) , եւ յետոյ Սեն-Գրնիի արքայաբանն ուր փոխադրուած է Լեւոնի սապանագրը , առանց նշխարի : Այսպէսով միայն կրցայ սուզել խնդիրն եւ համոզում գոյացնել :